ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-041-2023
22.05.2023թ.

«ԻԹԱԿԷ 999» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԵԼԵՄԱԿ ԱՆԱՆՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Այգեստան 5-րդ փողոց տուն 6/

Հարգելի՛ պարոն Անանյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 15-ին հայտարարված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման ԵՔԿԱ-ԲՄԾՁԲ-22/43 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԻԹԱԿԷ 999» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02811283, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Այգեստանի 5-րդ փ., տուն 6, հեռ.՝ +37477711933, էլեկտրոնային հասցե՝ telemak@ithakastudio.com), որի հետ 12.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԲՄԾՁԲ-22/43 ծածկագրով ծառայությունների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, սահմանված ժամկետում՝ 21.04.2023թ-ին, Ձեզ սահմանված կարգով Ձեր կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին (telemak@ithakastudio.com) ուղարկելու միջոցով ծանուցվել է համաձայնագրի նախագիծը և համաձայնագիր կնքելու առաջարկը, առաջարկելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների տեսքով որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները փոխարինել բանկային երաշխիքներով կամ կանխիկ գումարով, ստորագրել ներկայացվող համաձայնագիրը՝ 2 օրինակից և ներկայացնել Պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 20 հասցեով:

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

Սահմանված վերջնաժամկետին՝ 17.05.2023թ-ը ներառյալ, Ձեր կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել հաստատված համաձայնագիրը, ինչպես նաև ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների տեսքով որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները չեն փոխարինվել բանկային երաշխիքներով կամ կանխիկ գումարով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընթացակարգն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն, ինչի մասին տեղյակ եք եղել հայտը ներկայացնելիս, միաժամանակ՝ Ձեզ համաձայնագիրը ծանուցվել է սահմանված ժամկետներում, ուստի՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն ամբողջությամբ լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. հունիսի 5-ը ներառյալ, ապահովել պայմանագրի կատարման ապահովման՝ 7,000,000.00 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովման՝ 1,050,000.00 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ **ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ**